ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«17» մայիս 2017թ. No 24 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՏՇԱՃ ԲԱՇԽՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Դեղերի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը, 24-րդ հոդվածի առաջին մասը՝

Հրամայում եմ

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի փոխադրումը և մեծածախ իրացումն իրականացվում է Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի նոյեմբերի 6-ի N 2001/83/ դիրեկտիվի համաձայն հաստատված «Պատշաճ բաշխման գործունեության ուղեցույցների» կամ Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի Խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի N80 որոշմամբ հաստատված «Եվրասիական տնտեսական միության պատշաճ բաշխման գործունեության կանոնների» համաձայն:
2. Սույն հրամանը ուժի մեջ մտնելու հաջորդ օրը «Պատշաճ բաշխման գործունեության ուղեցույցները» և «Եվրասիական տնտեսական միության պատշաճ բաշխման գործունեության կանոնները» տեղադրել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում (www.moh.am):

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ